



26.10.2011

Այսօր՝ 2011թ. հոկտեմբերի 26-ին, «Էրեբունի» պատմահնագիտական թանգարանը հյուընկալել է Իտալիայի Արվեստների և վերականգնման «Պալացցո Սպինելլի» ինստիտուտի դասավանդող, խեցեղենի և քարե հնագիտական գտածոների վերականգնման մասնագետ Ելենա Ֆունջինիին՝ ով հանդես է եկել Իտալիայում խեցեղենի վերականգնման ժամանակակից մոտեցումների և վերականգնման պրակտիկայում կիրառվող նյութերի մասին դասախոսությամբ: Ինտերակտիվ ընթացող դասախոսությանը հաջորդել է գործնական աշխատանք արգելոց-թանգարանի վերականգնողական լաբորատորիայում. մասնավորապես ներկայացվել է մեղրամոմի, բնական խեժի և «Խառնուրդ -76» կոչվող միացության՝ որպես առավել ձկուն վերականգնողական նյութերի առավելությունը հնագիտական առարկաների ամբողջացման պրակտիկայում լայնորեն օգտագործվող գիպսի համեմատությամբ:

Ե. Ֆունջինիի այցը Հայաստան և դասախոսությունների կազմակերպումը իրականացվել է տարածքային զարգացման համագործակցությանն ուղղված «Բանյո ա Ռիպուլիի – Արարատ» նախագծի շրջանակում, որին իր կրթամշակութային աջակցությունն է ցուցաբերել 1976թ. Ֆրանչեսկո Ամոդեյի կողմից Ֆլորենցիայում հիմնադրված և շարժական ժառանգության վերականգնման բնագավառում առաջատար փորձ ունեցող «Պալացցո Սպինելլի» վերականգնման կենտրոնը: